ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/66

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Վառմաշ» ՍՊԸ-ի 05.05.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Վառմաշ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Վառմաշ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 05.05.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 279+727-կմ 282+727 հատվածի հիմնանորոգման, Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ41+200- կմ57+069 հատվածի հիմնանորոգման, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Նժդեհ փողոցի հիմնանորոգման, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Սարգսյան-Միլիոնի փողոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Շ» ծածկագրով բաց մրցույթին մասնակցել են «Վառմաշ» ՍՊԸ-ն և «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ն»:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Պարտավորեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

1.Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 03.04.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով սահմանված որոշումը, մասնավորապես, «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի մասով և սույն որոշումից բխող բոլոր կայացված որոշումները, քանի որ «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ն հայտով ներկայացրել է հայտը ստորագրելու լիազորագիրը, որը ժամանակային առումով ավելի ուշ է տրված, քան հայտը ստորագրվել է, այսինքն, հայտը ստորագրող անձը լիազորված չի եղել այն ստորագրելու պահին:

2. Ընթացակարգի շրջանակներում 4-րդ չափաբաժնի մասով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Վառմաշ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

Բողոքի քննության նպատակով բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Քրիստինա Մարտիրոսյանը:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Գուրգեն Թադևոսյանը և Սամվել Թամրազյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/66 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Վառմաշ» ՍՊԸ-ի 05.05.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Շ» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 03.04.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությունը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար՝ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ279+727-կմ282+727 հատվածի հիմնանորոգման , Մ- 4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 41+200+ կմ 57+ 069 հատվածի հիմնանորոգման, ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Թումանյան փողոցի հիմնանորոգման, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Նժդեհ փողոցի հիմնանորոգման, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Սարգսյան - Միլիոնի փողոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Շ» ծածկագրով բաց մրցույթը, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտեր են ներկայացրել «Վառմաշ» ՍՊԸ-ն և «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ն:

Հանձնաժողովի 03.04.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N2 արձանագրության 2-րդ կետի «ա» ենթակետով Հանձնաժողովը որոշել է «Վառմաշ» ՍՊԸ-ի և «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար, քանի որ վերջիններս համապատասխանել են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Նույն կետի «բ» ենթակետով Հանձնաժողովը որոշել է «Վառմաշ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 5-րդ չափաբաժնի, իսկ «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ին՝ 4-րդ չափաբաժնի մասով:

«Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ն հայտով ներկայացրել է 31.03.2018թ. թվագրված լիազորագիր, որով վերջինիս տնօրենը լիազորել է գլխավոր հաշվապահ Հայկազ Պետրոսյանին «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի անունից մասնակցելու «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Շ» ծածկագրով բաց մրցույթին և ստորագրել համապատասխան փաստաթղթեր:

Նույն լիազորագիրը լիազորված անձ Հայկազ Պետրոսյանի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրվել է 31.03.2018թ. ժամը 13:17-ին:

«Վառմաշ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ն հայտով ներկայացրել է հայտը ստորագրելու լիազորագիրը, որը

ժամանակային առումով ավելի ուշ է տրված, քան հայտը ստորագրվել է, այսինքն, հայտը ստորագրող անձը լիազորված չի եղել այն ստորագրելու պահին, ուստի «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու Հանձնաժողովի որոշումները հակասում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Միաժամանակ, Բողոքներ քննող անձի այն հարցին, թե «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Վարդանյանի կողմից ոչ էլեկտրոնային եղանակով 31.03.2018թ. կոնկրետ որ ժամին է ստորագրվել լիազորագիրը, բողոքաբերի ներկայացուցչի կողմից հստակ պատասխան չտրվեց:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը

հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով(...):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/4Շ» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի տնօրենի կողմից վերջինիս գլխավոր հաշվապահ Հայկազ Պետրոսյանին տրված լիազորագիրը ոչ էլեկտրոնային եղանակով՝ ձեռագիր ստորագրությամբ ստորագրվել է 31.03.2018թ. :

Նկատի ունենալով, որ «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայտով ներկայացրած՝ հայտում ներառված փաստաթղթերը ստորագրելու գլխավոր հաշվապահ Հայկազ Պետրոսյանին տրված լիազորագիրը «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի տնօրենի կողմից ոչ էլեկտրոնային եղանակով՝ ձեռագիր ստորագրությամբ ստորագրվել է 31.03.2018թ., և վերը նշված հանգամանքը բավարար հիմք չի տալիս հավաստելու, որ նշված լիազորագիրը ժամանակային առումով ավելի ուշ է տրված, քան հայտի ստորագրման պահը, հետևաբար, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վառմաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վառմաշ» ՍՊԸ-ի 05.05.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ